

երթեալ տեսանել՝ թէ զինչ իրք իցեն ի բանակին Յայոց թագաւորին Արշակայ. զի այնչափ ժամս յամեաց գալ յայգորել թագաւորին Պարսից Շապիոյ: 56 Ապա երթեալ տեսանէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր իւրեանց զհորանս եւ զվրանս եւ զհովանոցս եւ զսրահակս եւ զգահոյս եւ զանկողինս եւ զկահ եւ զկազմածս եւ զկարասի իւրեանց, եւ զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զգէսս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, եւ զնացեալք: 57 Եւ որք չոգան ի բանակն, գային զամենայնն պատմէին Շապիոյ արքային Պարսից: 58 Եւ իբրեւ լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստունն էր, զհտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղէն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ թագաւորին Յայոց յիմոց աստի եղեալ է. զի ի մէջ ի մերմէ ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ: 59 Ապա իւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ծիով զբազումս յղէր զհետ թագաւորին Յայոց, հանդերձ երդմամբ ի սեր միաբանութեան եւ յանդիմանութեան՝ զի դարձցին, եւ զչարախաւսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբիցեն: 60 Եւ ոչ կամեցաւ արքայն Յայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից Շապիոյ, եւ ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից: 61 Ապա յայն արեւ հետեւ եւ անդր յուզեցաւ պատերազմ գրգռութիւն մարտից ճակատուց ի մէջ թագաւորին Յայոց Արշակայ եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապիոյ ամս արեւի քան զերեսուն:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յաղագս թէ զհա՛րդ եղել պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից եւ ընդ Արշակ թագաւորն Յայոց զառաջինն, կամ զհա՛րդ յաղթէր Արշակ արքայ Յայոց:

2 Ապա ամս ութ, յետ զնալոյն փախչելոյն արքային Յայոց Արշակայ ի թագաւորէն Պարսից Շապիոյ, լուռ լինէր թագաւորն Պարսից ի թշնամութենէ. եւ խաւսէր համակ ողոքով, եւ աղաչէր զԱրշակ արքայ Յայոց՝ սիրով հաշտ եւ միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան: 3 Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր թագաւորն Պարսից՝ ստեպ ստեպ յանդադար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց: 4 Իսկ Արշակ արքայ Յայոց ոչ ինչ կամէր անսալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել ի նա. եւ յղեալ դեսպանս, եւ ոչ ինչ տալ պատարագս ընծայից, եւ ոչ հուպ ինչ կամ մաւտ լինել ի նա բնաւին. եւ զանունն անգամ նոցա ոչ կամէր լսել: 5 Իսկ թագաւորն Պարսից ստեպ ստեպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս: 6 Եւ ինքն հապճեալ կռուէր ընդ թագաւորսն Յունաց:

7 Այլ իբրեւ եղել խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապիոյ, ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: 8 Եւ գրեալ էր յուխտից նամակին այս-